

# Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ ԺԲ. — ՇՐՋԱՆ ԺԵ. 1882 ՏԱՐԻ ԺԵ. ԴԵԿՏԵՄ. 31.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

### Ի ԽՄԲԱԳՐՈՒԹԵՆԷ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՅՍ.

---

«ԱՐԱՐԱՏ» ամսագրոյս Հնգետասաներորդ շրջանը լրանալով՝ 1883 թուականի Յունվարից պէտքէ Վեշտասաներորդ (ԺԶ) շըրջանն սկսի: Ուստի խնդրումենք մեր Գործակալներից, որ փութան ծանուցանել Տպ. Ժողովոյն «ԱՐԱՐԱՏ»ին բաժանորդագրուիլ ցանկացողաց անունները ճիշտ հասցէներով:

Մեծայոյս եմք, որ մեր սիրելի Ազգայինք, ինչպէս մինչեւ ցարդ համակրած են «Արարատ» ամսագրոյս և իւրեանց խրախուսանքը չեն զլացած, նոյնպէս կփութան յառաջակայում և միշտ միևնոյն զգացմամբ բաժանորդագրուիլ և օգնել սմին:

Արարատի թերթից քանակութիւնն ու բաժանորդագինը նոյնը կմնան, իսկ ուղղութիւնը Եկեղեցական—Ազգային և բովանդակութիւնը աւելի նպատակայարմար կլինին: